«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № _____ §_____ _____ 2019թ.

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակացույցները:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանք-ների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա տնօրենության նիստերում:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.Վ.ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

I. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն ավարտել՝

ա) ոչ ավարտական կուրսերում՝ հունիսի 7-ին,

բ) ավարտական կուրսերում՝ ապրիլի 6-ին:

2. 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:

3. 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննություններն անցկացնել ապրիլի 8-ից մինչև ապրիլի 13-ը ժամանակահատվածում:

4. Երկրորդ ընթացիկ քննություններն անցկացնել հունիսի 1-ից մինչև 8-ը ժամանակահատվածում:

5. 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանն անցկացնել՝

ա) ավարտական կուրսերում՝ ապրիլի 8-ից մինչև ապրիլի 13-ը,

բ) ոչ ավարտական կուրսերում՝ հունիսի 10-ից մինչև հունիսի 28-ը ժամանակահատվածներում:

6. 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ընթացիկ քննություններին և քննաշրջանին:

7. Պարտքերի մարում սահմանել՝

ա) առաջին լուծարքային շրջան՝ ապրիլի 16-ից մինչև ապրիլի 20-ը (ավարտական կուրսերի համար), իսկ օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 7-ը (ոչ ավարտական կուրսերի համար),

բ) երկրորդ լուծարքային շրջան՝ ապրիլի 22-ից մինչև ապրիլի 30-ը (ավարտական կուրսերի համար), իսկ սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 21-ը (ոչ ավարտական կուրսերի համար):

8. 2019թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացնել մայիսի 3-ից մինչև հունիսի 3-ը ժամանակահատվածում:

9. Պրակտիկան սկսվելուց 15 օր առաջ ՈւԳԿՎ և ՄԿՊԿ բաժիններ ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների վերաբերյալ զեկուցագրերն (ընդհանուր բաժնով) ու ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի տեղաբաշխած ուսանողների ցուցակները: Պրակտիկայի ավարտից հետո 20-օրյա ժամկետում ներկայացնել պրակտիկաների վերաբերյալ հաշվետվությունները:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<u>ՀՈՒՆՎԱՐ</u>

- Մինչև հունվարի 18-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ԵՊՀ մագիստրատուրայի 2019թ. առկա ուսուցման ընդունելության առաջին փուլի պահանջներին բավարարող հավակնորդների նախնական ցուցակները:
- Հունվարի 24-ից մինչև հունվարի 31-ը ՈւԳԿՎ բաժին ներկայացնել 1-4-րդ կիսամյակներում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման համար դիմումները (ընդհանուր բաժնով)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև հունվարի 25-ը ՈւԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

• Մինչև փետրվարի 25-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները /հաշվետվություն ձև 34/:

• Մինչև հունվարի 31-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասատախտակները:

ՓԵՏՐՎԱՐ

• Մինչև փետրվարի 1-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել տվյալներ ուսանողների շրջանում ուսանողական առցանց հարցումներ կազմակերպելու համար:

• Փետրվարի 1-ից մինչև փետրվարի 7-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:

• Մինչև փետրվարի 1-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների մասին զեկուցագրերը:

• Մինչև փետրվարի 5-ը ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերի փաթեթները:

• Մինչև փետրվարի 18-ը ներկայացնել պետական կրթաթոշակներ ստացող ուսանողների վերաբերյալ ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների արձանագրությունները՝ համապատասխան ցուցակներով:

• Մինչև փետրվարի 18-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքների արդյունքներն ըստ սահմանված ձևի:

• Մինչև փետրվարի 25-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում վերականգնված ուսանողների վերակնքված պայմանագրերը:

• Մինչև փետրվարի 28-ը ներկայացնել 2019թ. բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:

ՄԱՐՏ

• Մինչև մարտի 1-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցները:

• Մինչև մարտի 4-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքների արդյունքներն ըստ սահմանված ձևի:

• Մարտի 1-ից մինչև մարտի 4-ը ժամանակահատվածում ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով (ընդհանուր բաժնով):

• Մինչև մարտի 4-ը ներկայացնել ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ ձևաթղթերի և տետրերի քանակը:

• Մինչև մարտի 4-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել տվյալներ ավարտական կուրսերի ուսանողների շրջանում ուսանողական առցանց հարցումներ կազմակերպելու համար:

• Մինչև մարտի 6-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել դիպլոմների լրացման համար շրջանավարտների անձնագրային տվյալները (երեք լեզվով):

• Մինչև մարտի 7-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը (դիմումների ընդունումը կազմակերպել փետրվարի 11-ից):

• Մինչև մարտի 11-ը ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

• Մինչև մարտի 27-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

• Մինչև մարտի 28-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2019թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

ԱՊՐԻԼ

• Մինչև ապրիլի 3-ը ՄԿՊԿ բաժին ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա համար նախատեսված պրակտիկաների ծրագրերը:

• Մինչև ապրիլի 3-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա կամընտրական դասընթացներին ցուցակագրված ուսանողների թիվը:

• Ապրիլի 4-ից մինչև 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման մինչև հինգերորդ կիսամյակը և հինգերորդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները (ընդհանուր բաժնով)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

• Մինչև ապրիլի 8-ը ներկայացնել առկա ուսուցման 2019թ. ամփոփիչ ատեստավորման գործընթացների ժամանակացույցները: Ամփոփիչ ատեստավորմանը հաջորդող երկու օրվա ընթացքում ՈՒԳՊՎ բաժին ներկայացնել ուսանողների ավարտման վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

• Մինչև ապրիլի 9-ը ներկայացնել լրացուցիչ մանկավարժի որակավորում ստանալու համար ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի:

• Ապրիլի 11-ից մինչև 17-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:

• Մինչև ապրիլի 12-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասամատյանների քանակը՝ նշելով տեսակները (փոքր, միջին, մեծ):

• Մինչև ապրիլի 13-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը):

• Մինչև ապրիլի 13-ը ՈՒԳՊՎ բաժին ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

• Մինչև ապրիլի 16-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ըստ սահմանված ձևի և հաշվետվության 34 ձևը:

• Մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնումներն անցկացնել ապրիլի 25-ից մինչև մայիսի 2-ը ժամանակահատվածում:

ՄԱՅԻՍ

• Մինչև մայիսի 2-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ, սահմանված ձևով «SuperVision» ծրագրում մուտքագրել 2019-2023թթ. ուսումնական պլանները:

• Մինչև մայիսի 3-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով (ընդհանուր բաժնով):

• Մինչև մայիսի 3-ը ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքների արդյունքներն ըստ սահմանված ձևի:

- Մինչև մայիսի 13-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցները:
- Մինչև մայիսի 17-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ, սահմանված ձևով «SuperVision» ծրագրում մուտքագրել աշխատանքային ուսումնական պլանները:
- Մինչև մայիսի 31-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել տվյալներ ուսանողների շրջանում 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական առցանց հարցումներ կազմակերպելու համար:

ՀՈՒՆԻՍ

- Հունիսի 1-ից հունիսի 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման հինգերորդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի համար դիմումները (ընդհանուր բաժնով)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ:
- Մինչև հունիսի 4-ը ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կուրսի ուսանողների համար նախատեսված կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի նյութերը:
- Մինչև հունիսի 7-ը ներկայացնել հաշվետվություն 2019թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):
- Մինչև հունիսի 10-ը ներկայացնել ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկված կուրատորների հաշվետվությունների վերաբերյալ քաղվածքները:
- Հունիսի 10-ից մինչև հունիսի 20-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման հինգերորդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև հունիսի 14-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ «SuperVision» ծրագրում մուտքագրել ամբիոնային և դասախոսների անհատական բեռնվածությունները:
- Հունիսի 20-ից մինչև 30-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման համար դիմումները (ընդհանուր բաժնով)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև հունիսի 22-ը ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները:

ՀՈՒԼԻՍ

- Մինչև հուլիսի 2-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ըստ սահմանված ձևի և հաշվետվության 34 ձևը:

- Մինչև հուլիսի 6-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև հուլիսի 8-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ուսանողների կուրսից կուրս փոխադրման վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):
- Մինչև հուլիսի 15-ը ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները:
- Մինչև հուլիսի 16-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

ՕԳՈՍՏՈՍ

• Մինչև օգոստոսի 28-ը ներկայացնել ֆակուլտետների մանդատային հանձնաժողովներում հաստատված փոխատեղման (ռոտացիա) արդյունքները (արձանագրությունների քաղվածքները և հավակնորդների ցուցակները), իսկ առաջին լուծարքային շրջանին մասնակցող հավակնորդների առկայության դեպքում՝ մինչև սեպտեմբերի 10-ը:

II. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

• Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ ոչ ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն իրականացնել մարտի 11-ից ապրիլի 6-ը, իսկ ավարտական կուրսերինը՝ մարտի 11-ից մինչև մարտի 23-ը ժամանակահատվածում:

• 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննություններն անցկացնել ապրիլի 15-ից մինչև ապրիլի 27-ը ժամանակահատվածում:

• 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննություններն անցկացնել մայիսի 20-ից մինչև հունիսի 1-ը ժամանակահատվածում:

• 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանն անցկացնել՝

ա) ավարտական կուրսերում՝ ապրիլի 22-ից մինչև 27-ը,

բ) ոչ ավարտական կուրսերինը՝ հունիսի 3-ից մինչև 29-ը ժամանակահատվածներում:

1. 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ընթացիկ քննություններին և քննաշրջանին:

2. **Պարտքերի մարում սահմանել՝**

ա) առաջին լուծարքային շրջան՝ ապրիլի 30-ից մինչև մայիսի 4-ը (ավարտական կուրսերի համար), իսկ օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 7-ը (ոչ ավարտական կուրսերի համար),

բ) երկրորդ լուծարքային շրջան՝ մայիսի 8-ից մինչև մայիսի 14-ը (ավարտական կուրսերի համար), իսկ սեպտեմբերի 13-ից մինչև սեպտեմբերի 21-ը (ոչ ավարտական կուրսերի համար):

• 2019թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացնել հունիսի 10-ից մինչև հուլիսի 2-ը ժամանակահատվածում:

• Պրակտիկան սկսվելուց 15 օր առաջ ՈՒԳՊՎ և ՄԿՊԿ բաժիններ ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների վերաբերյալ զեկուցագրերն (ընդհանուր բաժնով) ու ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի տեղաբաշխած ուսանողների ցուցակները:

Պրակտիկայի ավարտից հետո 20-օրյա ժամկետում ներկայացնել պրակտիկաների վերաբերյալ հաշվետվությունները:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՈՒՆՎԱՐ

- Հունվարի 24-ից մինչև հունվարի 31-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 1-6-րդ կիսամյակներում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները (ընդհանուր բաժնով)՝ բաժնի վարիչի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

ՓԵՏՐՎԱՐ

- Փետրվարի 1-ից մինչև փետրվարի 7-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:

- Մինչև փետրվարի 18-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):
- Մինչև փետրվարի 20-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասատախտակները:
- Մինչև փետրվարի 28-ը ներկայացնել 2019թ. բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորումների հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:

ՄԱՐՏ

- Մինչև մարտի 1-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել տվյալներ ուսանողների շրջանում ուսանողական առցանց հարցումներ կազմակերպելու համար:
- Մարտի 1-ից մինչև մարտի 4-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով (ընդհանուր բաժնով):
- Մինչև մարտի 4-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները /հաշվետվություն ձև 34/:
- Մինչև մարտի 14-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում վերականգնված ուսանողների վերակնքված պայմանագրերը:
- Մինչև մարտի 18-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել դիպլոմների լրացման համար շրջանավարտների անձնագրային տվյալները (երեք լեզվով):
- Մինչև մարտի 19-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքների արդյունքներն ըստ սահմանված ձևի:
- Մինչև մարտի 23-ը ներկայացնել ոչ ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների ժամանակացույցները:

• Մինչև մարտի 23-ը ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

• Մինչև մարտի 25-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը (դիմումների ընդունումը կազմակերպել մարտի 11-ից):

• Մինչև մարտի 28-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2019թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

ԱՊՐԻԼ

• Մինչև ապրիլի 2-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքների արդյունքներն ըստ սահմանված ձևի:

• Ապրիլի 3-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա կամընտրական դասընթացներին ցուցակագրված ուսանողների թիվը:

• Մինչև ապրիլի 3-ը ՄԿՊԿ բաժին ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա համար նախատեսված պրակտիկաների ծրագրերը:

• Ապրիլի 4-ից մինչև ապրիլի 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև յոթերորդ կիսամյակը և յոթերորդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները (ընդհանուր բաժնով)՝ բաժնի վարիչի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

• Մինչև ապրիլի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել տվյալներ ավարտական կուրսերի ուսանողների շրջանում ուսանողական առցանց հարցումներ կազմակերպելու համար:

• Ապրիլի 11-ից մինչև ապրիլի 17-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:

• Մինչև ապրիլի 12-ը ներկայացնել 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի և ձևաթղթերի քանակը:

• Մինչև ապրիլի 12-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասամատյանների քանակը՝ նշելով տեսակները (փոքր, միջին, մեծ):

• Մինչև ապրիլի 13-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով էջերի թիվը:

• Մինչև ապրիլի 19-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

• Ապրիլի 25-ից մինչև մայիսի 02-ը ժամանակահատվածում անցկացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնումները:

• Մինչև ապրիլի 30-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ըստ սահմանված ձևի և հաշվետվության 34 ձևը:

ՄԱՅԻՍ

• Մինչև մայիսի 2-ը ներկայացնել ամփոփիչ ատեստավորումների գործընթացի ժամանակացույցները:

• Մինչև մայիսի 2-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ, սահմանված ձևով «SuperVision» ծրագրում մուտքագրել 2019-2024թթ. ուսումնական պլանները:

• Մայիսի 2-ից մինչև 3-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով (ընդհանուր բաժնով):

• Մինչև մայիսի 13-ը ներկայացնել ոչ ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

• Մինչև մայիսի 15-ը ներկայացնել ոչ ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների ժամանակացույցները:

• Մինչև մայիսի 16-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ավարտական կուրսերի 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքների արդյունքներն ըստ սահմանված ձևի:

• Մինչև մայիսի 17-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ, սահմանված ձևով «SuperVision» ծրագրում մուտքագրել աշխատանքային ուսումնական պլանները:

• Մինչև մայիսի 31-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել տվյալներ ուսանողների շրջանում 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական առցանց հարցումներ կազմակերպելու համար:

ՀՈՒՆԻՍ

• Հունիսի 1-ից մինչև հունիսի 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման յոթերորդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի համար դիմումները (ընդհանուր բաժնով)՝ բաժնի վարիչի մակագրությամբ և վճարման անդորրագրերով:

• Հունիսի 10-ից մինչև հունիսի 20-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել յոթերորդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:

• Մինչև հունիսի 14-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ «SuperVision» ծրագրում մուտքագրել ամբիոնային և դասախոսների անհատական բեռնվածությունները:

• Հունիսի 20-ից մինչև 30-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման համար դիմումները (ընդհանուր բաժնով)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

ՀՈՒԼԻՍ

• Մինչև հուլիսի 2-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ըստ սահմանված ձևի և հաշվետվության 34 ձևը:

• Մինչև հուլիսի 8-ը ներկայացնել հաշվետվություն 2019թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):

• Մինչև հուլիսի 8-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ուսանողների կուրսից կուրս փոխադրման վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

• Մինչև հուլիսի 16-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ընդհանուր բաժնով):

ՕԳՈՍՏՈՍ

• Մինչև օգոստոսի 30-ը ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կուրսի ուսանողների համար նախատեսված կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի նյութերը:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ